



ԱՐՇՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա



Ողջույնի խոսք

Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի Նորանկախ պետությունների և Հարավարևելյան Եվրոպայի երկրների հաղորդակցության և քարոզարշավի փորձագետների ցանցի հանդիպում

«Արժանապատիվ աշխատանք տնաշխատների համար - ԱՄԿ 189 կոնվենցիա» թեմայով եռօրյա սեմինար:

ԱԼԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի առաջին գագաթնաժողով

Բարի գալուստ,

«Արհմիութենական անցուղարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուղարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը: Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենագորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ



Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի Նորանկախ պետությունների և Հարավարևելյան Եվրոպայի երկրների հաղորդակցության և քարոզարշավի փորձագետների ցանցի հանդիպում



2024 թվականի նոյեմբերի 5-6-ին Բրյուսելում տեղի ունեցավ փորձագիտական ցանցային հանդիպում, որը միավորեց Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի Նորանկախ պետությունների և Հարավարևելյան Եվրոպայի հաղորդակցության և քարոզարշավի փորձագետների ցանցի անդամներին: Հանդիպումը կազմակերպվել էր «Նորանկախ պետություններում և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում արհմիությունների կարողությունների զարգացման» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Շվեդիայի Union to Union արհմիութենական կազմակերպության կողմից:

Հանդիպման աշխատանքները բաժանված էին երկու հիմնական մասի: Առաջին օրը մասնակիցները քննարկեցին Արհմիությունների միջազգային և եվրոպական կոնֆեդերացիաների հաղորդակցման օրակարգերը, արշավները և 2025 թվականի հաղորդակցման ռազմավարությունները: Երկրորդ օրը մասնակիցները հնարավորություն ունեցան մասնակցելու Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի երիտասարդական համաժողովին՝ «Երիտասարդների զբաղվածությունը թվայնացման դարաշրջանում. մարտահրավերներ և հնարավորություններ արդար թվայնացման համար» խորագրով:



- Ալեն Ռոդրիգեսը ներկայացրեց «Time for 8» (Կայուն զարգացման նպատակ 8) արշավը, որը նպատակ ունի ուժեղացնել արհմիությունների դերակատարությունը կայուն զարգացման գործընթացում: Արշավը նախատեսված է՝
- խթանելու արհմիությունների կայուն զարգացման դիրքերը,
- ստեղծելու հարթակ աշխատողների վկայությունների փոխանակման համար,
- ամրապնդելու արհմիությունների հեղինակությունը որպես զարգացման գործընթացի առանցքային մասնակիցներ,
- ոգեշնչելու այլ արհմիություններին մասնակցել զարգացման քաղաքականությանը:

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի քարոզարշավի ղեկավար Մարիկե Քոնինգը ներկայացրեց «Հանուն ժողովրդավարության» արշավը, որը նպատակ ունի պայքարել աշխատողների իրավունքների գլոբալ երոզիայի և ժողովրդավարության անկման դեմ: Արշավի հիմնական նպատակներն են՝

- խթանել ժողովրդավարությունը հասարակության, աշխատավայրերի և գլոբալ ինստիտուտների մակարդակներում,
- իրականացնել գործողություններ, ինչպիսիք են խնդրագրերի ներկայացումը, գլոբալ գործադուլները և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ աշխատողների իրավունքների և սոցիալական նոր պայմանագրի պաշտպանությունը ապահովելու համար:

Մասնակիցները ծանոթացան Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի առանցքային տեղեկատվական հարթակին՝ Equal Times-ին, որի խմբագիր Մարթա Չեկան ներկայացրեց խմբագրական քաղաքականության առանձնահատկությունները, հոդվածների ընտրության գործընթացը և տարածաշրջանային իրադարձությունների հնարավոր լուսաբանման մոտեցումները:

Կլոր սեղանի ընթացքում մասնակիցները քննարկեցին Նորանկախ պետությունների և Հարավարևելյան Եվրոպայի արհմիութենական արշավների իրականացման հաջողություններն ու դժվարությունները: Քննարկումների արդյունքում սահմանվեցին հետագա աշխատանքի հիմնական կետերը.

- ստեղծել հաղորդակցության գործիք՝ ցանցի ձեռքբերումների և փոփոխությունների մասին տեղեկատվություն տրամադրելու համար,
- տեղայնացնել միջազգային նյութերը տարածաշրջանի համար,
- թարմացնել Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի արշավների վերաբերյալ տեղեկատվությունը:



Եռօրյա սեմինար «Արժանապատիվ աշխատանք տնաշխատների համար - ԱՄԿ 189 կոնվենցիա» թեմայով



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) համագործակցության շրջանակներում 2024 թվականի նոյեմբերի 8-10-ը անցկացվեց «Արժանապատիվ աշխատանք տնաշխատողների համար - ԱՄԿ 189 կոնվենցիա» թեմայով եռօրյա սեմինար: Միջոցառումը վարեցին ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հավասարության և խտրականության բացառման հարցերով տեխնիկական մասնագետ Օզգե Բերբեր-Ագտաշը, ՄԻՀԿ փորձագետ Անահիտ Սիմոնյանը, ինչպես նաև Հնդկաստանի զբաղվածության և աշխատանքի նախարարության աշխատանքի ազգային ինստիտուտի փորձագետ, գիտությունների դոկտոր Էլինա Սամանթրոյը:

Սեմինարի ընթացքում ելույթ ունեցավ նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, ով ներկայացրեց ոլորտում իրականացված աշխատանքները՝ շեշտադրելով ինչպես դրական փորձը, այնպես էլ առկա մարտահրավերները: Եռօրյա քննարկումների ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայականներ:



Արևելյան գործընկերության (ԱԳ) Զաղաքացիական հասարակության ֆորումի առաջին գագաթնաժողով

2024 թվականի նոյեմբերի 19-21-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում անցկացվեց Արևելյան գործընկերության (ԱԳ) Զաղաքացիական հասարակության ֆորումի առաջին Գագաթնաժողովը: Միջոցառմանը մասնակցեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը՝ հայկական պատվիրակության կազմում որպես 5-րդ աշխատանքային խմբի համակարգող, պատվիրակ և Գագաթնաժողովի մոդերատոր:

Գագաթնաժողովի ընթացքում անցկացված պանելային քննարկումները նվիրված էին ԱԳ տարածաշրջանում առկա մարտահրավերներին և խնդիրներին, ինչպես նաև ԱԳ երկրներում իրականացվող նախաձեռնություններին ու ձեռքբերումներին:





Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3

Հեռ.՝ +37410 583682

www.hamk.am

hamk@hamk.am